



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«            »

2017 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-149-06.10.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1256 -Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-149-06.10.2017-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծի ընդունումը չի նպաստի նախագծի առջև դրված նպատակների իրականացմանը, այլ միայն կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազմանը, առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող՝ գործող Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասը թողնել անփոփոխ՝ ստորև ներկայացված հիմնավորմամբ.

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 92-րդ հոդվածով նախատեսված է, որ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումարները հարկ վճարողները հաշվանցում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարներից: Այսինքն՝ հումքի համար վճարվող ակցիզային հարկի գումարները հաշվանցվում են և արտադրվող քսայուղի արժեքը չի կարող ավելացնել: Դա վերաբերում է նաև տեղական արտադրության քսայուղերի համար հումք հանդիսացող, ԱՏԳ ԱԱ 271019710 0 ծածկագրին դասվող քսայուղերին:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված է արդյունաբերական ընկերությունների կողմից իրենց կարիքների համար ԱՏԳ ԱԱ 2710 19 710-2710 19 980 ծածկագրերին դասվող ապրանքների ձեռքբերման դեպքում այդ ապրանքների համար վճարված ակցիզային հարկի գումարների փոխհատուցման կարգ:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանկացած հարկային արտոնության սահմանումը մշտապես ուղեկցվում է ոչ միայն հարկումից խուսափելու և չարաշահումների ռիսկերով, այլ նաև

հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազեցման՝ գտնում ենք, որ ցանկացած նոր հարկային արտոնության սահմանման առաջարկությունը պետք է ուղեկցվի համապատասխան վերլուծություններով և հաշվարկներով, որոնց արդյունքում հնարավոր կլինի հասկանալ, թե ինչ հետևանքներ և ինչ արդյունքներ է տալու նման առաջարկության ընդունումը: Մասնավորապես, գտնում ենք, որ քսայուղերի ապրանքախմբում ներառվող ԱՏԳ ԱԱ 271019710 0 ծածկագրին դասվող քսայուղն ակցիզային հարկից ազատելուց, ինչպես նաև 1 կգ քսայուղերի ակցիզային հարկի նվազագույն չափը 300 դրամ սահմանելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել ծախսեր-օգուտներ վերլուծություն՝ գնահատելու համար արտոնության սահմանման արդյունքում պետության կրած կորուստները և արտոնության հնարավոր շահառուների օգուտները:

3. Նախագծի ընդունման հիմնավորմամբ նշված է, որ քսայուղերի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ակցիզային հարկի դրույքաչափի նվազեցումը կնպաստի տեղական արտադրության քսայուղերի մրցունակության բարձրացմանը: Այդ կապակցությամբ, գտնում ենք, որ ներկայացված առաջարկության ընդունման արդյունքում տեղական արտադրության քսայուղերի մրցունակության բարձրացման ակնկալիքներն իրատեսական չեն՝ հաշվի առնելով այն, որ քսայուղերի համար սահմանված ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը գործնականում կիրառվում են ինչպես տեղական, այնպես էլ ներմուծվող՝ ցածր գնային սեգմենտի քսայուղերի համար: Միևնույն ժամանակ, տեղական արտադրության քսայուղերի արտահանման դեպքում էլ վճարված ակցիզային հարկերը հետ են վերադարձվում: Այս առումով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով քսայուղերի համար սահմանված ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափի իջեցումը նախագծի ընդունման հիմնավորմամբ ակնկալվող արդյունքը չապահովելով հանդերձ կհանգեցնի պետական բյուջեի հարկային եկամուտների կորստի: Ընդ որում, հատկանշական է այն, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով քսայուղերի համար ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվել են՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ընդհանուր

Ֆիսկալ ազդեցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների վրա, ինչով պայմանավորված հնարավոր է դարձել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով կատարել հարկային համակարգի այնպիսի բարեփոխումներ, որոնք հանգեցնում են հարկային եկամուտների կորստի: Հետևաբար, հարկային օրենսգրքի ընդունումից հետո հարկային եկամուտների կորուստ առաջացնող ցանկացած փոփոխության իրականացում ենթադրում է լուրջ հարկաբյուջետային ռիսկերի առաջացում:

4. Առաջարկության ընդունումն ստեղծում է հարկումից խուսափելու և չարաշահումների ռիսկեր՝ կապված ներմուծվող քսայուղերն առաջարկվող արտոնյալ ծածկագրին դասակարգելու և դրա հետևանքով ակցիզային հարկի վճարումից խուսափելու հետ: Թերևս հենց այդ ռիսկի կառավարման նպատակով է, որ գործող օրենսդրությամբ, որպես ենթասակցիզային ապրանք նախատեսվել է ոչ թե կոնկրետ որևէ ԱՏԳ ԱԱ ծածկագրին դասվող քսայուղը, այլ բոլոր քսայուղերն առհասարակ: Ընդ որում, վերոգրյալն օրենսդրությամբ ամրագրվել է օրենսդրական փոփոխությունների ճանապահով: Մասնավորապես, քսայուղերն ակցիզային հարկով հարկվում են 2012 թվականի հունվարի 1-ից: Օրենսդրական այդ փոփոխության կիրառության առաջին տարվա ընթացքում ակցիզային հարկով հարկվում էին միայն ԱՏԳ ԱԱ 271019810 ծածկագրին դասվող քսայուղերը: Հաջորդ տարվա ընթացքում կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում սահմանվեց, որ ակցիզային հարկով հարկման ենթակա են համարվում ԱՏԳ ԱԱ 2710 19 710-2710 19 980 ծածկագրերին դասվող բոլոր քսայուղերը, որպեսզի չեզոքացվի վերոնշյալ ռիսկը:

Պ-149-06.10.2017-ՏՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը			
			2018 թվականի հունվարի 1-ից	2019 թվականի հունվարի 1-ից	2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից
2207	էթիլային սպիրտ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 900 դրամ			
2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	73 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 725 դրամ	84 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 835 դրամ	96 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 960 դրամ	110 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 1100 դրամ
2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	55 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 550 դրամ			

2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թրմեր	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	<p>50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝</p> <p>ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000 դրամ</p> <p>բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500 դրամ</p> <p>գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամ</p>			
			<p>դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500 դրամ</p> <p>ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամ</p> <p>զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000 դրամ</p>			
2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թրմեր	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	66 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 3970 դրամ	6 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 4560 դրամ	87 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 5250 դրամ	100 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 6035 դրամ
2203	գարեջուր	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 105 դրամ			
2204	խաղողի գինի	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 100 դրամ			

2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 750 դրամ			
2206 (բացառությամբ 2206 00 390	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի	25 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 270 դրամ			
2206 00 590 2206 00 890)	(խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային, մրգային գինիների և գինենյութի	կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր				
2206 00 390 2206 00 590 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 100 դրամ			
2402 (բացառությամբ 2402 10 00011 2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)	ծխախոտի արտադրանք	Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գին՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ 1000 հատ	15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 7275 դրամ	15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 8370 դրամ	15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 9625 դրամ	15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 11070 դրամ
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	605000 դրամ			
2402 10 00012 2402 90 00012	սիգարելա	1000 հատ	16500 դրամ			
2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1500 դրամ			

2710 19 710 – 2710 19 980 (բացառությամբ 2710 19 710 0)	քայուղ	արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 կգ	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 300 դրամ
2710 12	բենզին	1 տոննա	40000 դրամ
2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 – 2710 19 980)	դիզելային վառելիք	1 տոննա	13000 դրամ
2709	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	27000 դրամ
2711 (բացառությամբ 2711 11 2711 21)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1000 դրամ
2711 21	սեղմված բնական գազ	1000 մ <sup>3</sup>	25000 դրամ

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից:



## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանված է ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկի հաշվարկման դրույքաչափերը, համաձայն որոնց՝ քայուղերի ԱՏԳ ԱԱ 271019710-ից մինչև 271019980 ապրանքախմբերի համար ակցիզային հարկի դրույքաչափը կազմում է 50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 400 դրամ: Այդ ապրանքախմբերի մեջ է ներառվում նաև ԱՏԳ ԱԱ 271019710 0 քայուղերը, այլ յուղերը վերամշակման հատուկ գործընթացների համար, ինչը տեղական քայուղերի արտադրության համար հանդիսանում է հումք: Ստացվում է, որ տեղական արտադրության քայուղերը պետք է հարկվեն երկու անգամ՝ մեկը հումքի ներմուծման, մյուսը՝ պատրաստի արտադրանքի վաճառքի փուլում:

Բացի այդ՝ 1 կգ քայուղի համար 400 դրամ նվազագույն ակցիզային հարկի սահմանումը պայմանավորված է ներմուծվող քայուղերի գնի եւ դրա հստակության որոշման դժվարություններով: Սակայն տեղական արտադրության դեպքում քայուղի մեկ կիլոգրամի գինը կարող է կազմել մինչև 500 դրամ, որի դեպքում 400 դրամ ակցիզային հարկը կկազմի գնի շուրջ 80 տոկոսը:

Նախագծով առաջարկվում է քայուղերի արտադրության համար անհրաժեշտ վերը նշված հումքի տեսակն ազատել ակցիզային հարկից, իսկ 1 կգ քայուղի ակցիզային հարկի նվազագույն չափը սահմանել 300 դրամ՝ նպաստելու տեղական արտադրության քայուղերի մրցունակության բարձրացմանը: